# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Նոյեմբերի 3-ին, չորեքշաբթի. - Պահք:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եւ մատուցեալ աշակերտացն Յիսուս... » (Մատթ. ԻԸ 18-20) բնաբանով քարոզ խոսեց:

***Նոյեմբերի 7-ին, կիրակի. - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց... ձայնի իմում լուիցեն եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ» (Հովհ. Ժ 11, 16) բնաբանով քարոզ խոսեց:

***Նոյեմբերի 14-ին, կիրակի. - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ, նա եղիցի մեծ» (Ղուկ. Թ 48) բնաբանով քարոզ խոսեց :

***Նոյեմբերի 21-ին, կիրակի. - ԺԱ. կիր. զկնի Ս. Խաչի: Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Շնորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ, որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս Քո» (Պատարագամատույց) բնաբանով քարոզ խոսեց:

***Նոյեմբերի 28-ին, կիրակի. - Ա. կիր. Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գեղարդ աբեղա Վահունին: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Դեկտեմբերի 4-ին, շաբաթ. - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն Իւր՝ ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս» (Մատթ. Ժ 1) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 5-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի՛ զանցանել եւ զրկել յիրիք յայդմիկ զեղբայր իւր, քանզի վրէժխնդիր է Տէր ի վերայ ամենայնի այդորիկ» (Ա Թես. Դ 6) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 9-ին, հինգշաբթի. - Պահք: Յղութիւն Սուրբ Աստուածածնի յԱննայէ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ նախապետսն ի զաւակէ նոցին օրհնիլ ամենայն ազգաց» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 12-ին, կիրակի. - Գ. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Բայց առանց հավատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ Նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա և վարձահատույց է լինում նրանց, ովքեր փնտրում են Իրեն» (Եբր. ԺԱ 6) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 19-ին, կիրակի. - Դ. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հաղթող և սուրբ հայրապետ, նման մեծին Մովսեսի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 25-ին, շաբաթ. - Սրբոյն Ստեփաննոսի նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին:*

Այսօր Մայր Տաճարում, Ս. Ստեփաննոսի Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հաստատուն եւ սուրբ պահեա զսոսա ի կոչումս, յոր կոչեցար» (Զեռնադրության Մաշտոց) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 26-ին, կիրակի. - Ե. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ազնիւ ծառայ եւ բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի» (Ղուկ. ԺԹ 17) բնաբանով քարոզ խոսեց: